

**Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանի
ռեկտոր Ա.Ս.Աղաբաբյանի
2011 թ. տարեկան հաշվետվություն**

Հաշվետու ժամանակահատվածում Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանը (այսուհետ կրճատ՝ ԵՄԽՀ) գործունեությունը ծավալել է՝ հաշվի առնելով բուհի ղեկավարության և գիտխորհրդի կողմից մշակված մանկավարժական և գիտակրթական մի շարք ուղղվածություններ:

Կրթական գործունեություն

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանում շարունակվել են աշխատանքները ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի կազմակերպման ու պլանավորման կատարելագործման, եվրոպական չափանիշներին համահունչ որակի ներքին ապահովման համակարգի բարելավման, բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում կրեդիտային համակարգի իրականացման, դասավանդման և ուսանողների գիտելիքների ստուգման ու գնահատման գործընթացների բարելավման և մանկավարժական գործընթացի մի շարք այլ ուղղություններով:

Կրեդիտային համակարգ

Համալսարանի ղեկավարության կողմից պարբերաբար կազմակերպվում են կրեդիտային համակարգի ներդրմանը նվիրված ճանաչողական և տեղեկատվական սեմինարներ ու լսումներ:

Աշխատանքներ են տարվում համալսարանի բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում կրեդիտային համակարգի ներդրման ուղղությամբ: Հատկապես մեծ աշխատանքներ են տարվում կրեդիտային հենքով մագիստրոսական ուսումնական պլանների և ծրագրերի առավել հստակ կիրառման ուղղությամբ:

Համալսարանի ղեկավարությունը նախապատրաստական աշխատանքներ է իրականացնում կրեդիտային համակարգի ընդլայնման, սովորողների և աշխատակազմի լայն շարժունության ապահովման ուղղություններով:

Ուսումնական գործընթացի ընթացիկ կազմակերպում

Հաշվետու ուսումնական տարում ձեռնարկվել են ուսումնական գործընթացի բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Իրականացվել է բակալավրիատի ու մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի ուսանողների և ԵՄԽՀ-ի միջև ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ պայմանագրերի կնքման գործընթացը:

<<Հայկական համալսարանների ռեկտորի խորհուրդ>> ՀԿ համագործակցության շրջանակներում ԵՄԽՀ-ում կազմակերպվել են դասախոսների կատարելագործման սեմինարներ, նաև այլ բուհերի դասախոսների համար /սեմինարի ղեկավար և անցկացնող Ֆ.մ.գ.դոկտոր պրոֆեսոր Հ.Գ.Ղազարյան/, ինչպես նաև մեր դասախոսներից խորհրդի կազմի այլ բուհերում մասնակցել են դասընթացների այլ մասնագիտություններով:

Ուսումնական գործընթացը կազմակերպելու համար հաշվառվել է լսարանային ֆոնդը, իրականացվել են աշխատանքներ այն արդյունավետ օգտագործելու և դասերի կանոնավոր կայացման ուղղությամբ:

Ուսման վարձերի գեղչերի կիրառման գործընթացն առավել հստակ և անթերի կազմակերպելու նպատակով ուսումնամեթոդական վարչությունը շարունակել է առաջադիմության վերահսկման աշխատանքները:

Ուսումնական պլանների մշտադիտարկում և վերանայում

Բոլոր մասնագիտություններով վերանայվել են ուսումնական պլանները, փոփոխություններ չեն կատարվել:

Բուհի առաջընթացը

ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի N 197 –ն որոշմամբ հաստատվեց ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման կարգը, որով նախատեսվում էր ոչ պետական բուհերի նախորդ տարիների այն շրջանավարտների հարցը, որոնք իրենց բուհերում ստացել էին ոչ պետական դիպլոմ, կազմակերպել ամփոփիչ ատեստավորման քննություններ /բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրով/ և ըստ մասնագիտությունների ամփոփիչ ատեստավորման քննությունները հանձնումը կազմակերպել 2011-2012/13 ուսումնական տարվա ավարտին:

Որոշումով նախատեսված էր, որ շրջանավարտներին պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման ու անցկացման նպատակով ՀՀ ԿԳ նախարարությունը ստեղծում է ընդունող հանձնաժողովներ, հաստատում է քննությունների կազմակերպման ընթացակարգը և հաստատում է պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանկը, որտեղ պետք է անցկացվեն վերոհիշյալ քննությունները: ՀՀ ԿԳ նախարարի հրամանով քննությունները կազմակերպվեցին 10 /տասը/ պետական և ոչ պետական հավատարմագրված բուհերում, այդ թվում նաև Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանում: Ավելին այդ 10 բուհերում քննություններ հանձնող ուսանողների ընդհանուր թվաքանակի ¼-ից ավելին քննությունները հանձնեցին ԵՄԽՀ-ում: Դա վկայում է ՀՀ ԿԳ նախարարի կողմից բուհի նկատմամբ վստահություն ունենալու և անաչառության վրա չկասկածելու փաստի մասին:

Որակի ապահովում

Հաշվետու տարում ԵՄԽՀ-ում ստեղծվեց Որակի ապահովման կենտրոն և համապատասխան հաստիքներ: Կենտրոնի հիմնական նպատակն է համալսարանում ստեղծել որակի մշակույթ և գործունեությունը տանել կանոնակարգման և հստակեցված քաղաքականության ուղիով: Բացի այդ կենտրոնի նպատակներից է բուհի գործընթացների արդյունավետության բարձրացման համար նոր մեխանիզմների ուսումնասիրությունը և ներդրումը՝ ապահովելով տեղեկատվության առավելագույն հասանելիություն և ներգրավվածություն աշխատակիցների և ուսանողների շրջանում:

Հաշվետու տարում Որակի ապահովման կենտրոնի հետ համատեղ վերանայվել և ճշգրտվել են մի շարք կանոնակարգեր և կանոնադրություններ: Կատարվել են այլ հեղինակավոր բուհերի առաջավոր փորձի ուսումնասիրություններ և գործնական կիրառումներ: Ինչպես նաև իրականացվել են հանդիպումներ այլ բուհերի որակի ապահովման կենտրոնների և պատասխանատուների հետ կոնֆերանսների և անհատական հանդիպումների շրջանակներում:

Ներկայումս կարելի է նշել, որ կենտրոնը ընթանում է կայացման ուղիով և օրըստօրե ընդլայնում է իր գործունեությունն ու բարձրացնում արդյունավետությունը:

Ընդունելության նախապատրաստում

Հաշվետու տարում մեծ աշխատանք է տարվել պետական մասնագիտական հաստատությունների 2007/08 ուս. տարվա շրջանավարտների հետ, նրանց ներկայացվել են համալսարանական մասնագիտությունները, ծանոթացրել շարունակական կրթության և ընդհանուր հիմունքներով բակալավրի ծրագրով բուհ ընդունվելու կարգին:

Ընդունելություն

Հաշվետու ուս. տարում բուհ են ընդունվել 81 ուսանող,
որից մագիստրատուրա – 25
բակալավր (առկա) – 0
բակալավր (հեռակա) – 56
Օտարերկրացիներ ընդունվել են ընդամենը - 29
մագիստրատուրա – 8
բակալավր (առկա) – 0
բակալավր (հեռակա) – 21

Հիմնական ուսանողական համակազմ

Ընթացիկ ուս. տարում ուսանողների ընդհանուր թիվը - 798
որից մագիստրատուրա – 36
բակալավր (առկա) – 455
բակալավր (հեռակա) – 307
Սովորում են օտարերկրացիներ ընդամենը - 118
մագիստրատուրա – 11
բակալավր (առկա) – 50
բակալավր (հեռակա) – 57

Շրջանավարտները

2011թ. համալսարանի ռեկտորի հրամանով հավատարմագրված 6 (վեց) մասնագիտությունների գծով առկա բաժնում թույլատրված 189 (մեկ հարյուր ութսունինը) ուսանողներից մասնակցել են բոլորը, որոնցից 173-ը (մեկ հարյուր յոթանասուներեք) քննությունները հանձնել են միայն դրական գնահատականներով, այդ թվում 33-ը ստացել են

միայն գերազանց գնահատականներ, որոնցից 27-ը պետական քննական հանձնաժողովի որոշմամբ արժանացել են գերազանցության դիպլոմի:

Հեռակա բաժնում ռեկտորի հրամանով քննություններին թույլատրված 40 ուսանողներից քննություններին մասնակցել են բոլորը, որոնցից 38 ստացել են դրական գնահատականներ, այդ թվում 6 (վեց) ուսանողներ քննությունները հանձնել են “գերազանց” գնահատականներով, որոնցից 3 (երեքը) պետական քննական հանձնաժողովի որոշմամբ արժանացել են գերազանցության դիպլոմի:

Մագիստրատուրայի բաժնում ռեկտորի հրամանով մագիստրոսական թեզերի պաշտպանության թույլատրված 7 (յոթ) ուսանողներից մասնակցել են 7-ը, որոնք բոլորն էլ ստացել են դրական գնահատականներ: Նրանցից 4-ը պետական քննական հանձնաժողովի որոշմամբ արժանացել են գերազանցության դիպլոմի:

Ըստ մասնագիտությունների պատկերը հետևյալն է.

Հեռակա բաժին

Մասնագիտութ.	Թույլ մասն.	Մասնակցել են	Միջին դրական գնահատական	Միայն գերազանց գնահատական	Գերազանցության դիպլոմ	Դիպլոմ չեն ստացել
Հայոց լեզու և գրակ.	1	1	1	-	-	-
Օտար լեզու և գրակ.	-	-	-	-	-	-
Ինֆ. և կիր. մաթեմ.	5	5	4	-	-	1
Մանկ. և մեթոդիկա	12	12	11	-	-	1
Միջ. տնտես. հարաբ.	15	15	15	-	-	-
Իրավագիտութ.	7	7	7	2	2	-
Ընդամենը	40	40	38	2	2	2

Առկա բաժին

Մասնագիտութ.	Թույլ մասն.	Մասնակցել են	Միջին դրական գնահատական	Միայն գերազանց գնահատական	Գերազանցության դիպլոմ	Դիպլոմ չեն ստացել
Հայոց լեզու և գրակ.	29	29	25	7	6	4
Օտար լեզու և գրակ.	16	16	16	4	2	-
Ինֆ. և կիր. մաթեմ.	22	22	18	6	5	4
Մանկ. և մեթոդիկա	50	50	42	2	2	8
Միջ. տնտես. հարաբ.	37	37	37	8	7	-
Իրավագիտութ.	35	35	35	6	5	-

Ընդամենը	189	189	173	33	27	12
----------	-----	-----	-----	----	----	----

Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի N 197-ն որոշման/ ոչ պետական բուհերի նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման կարգը հաստատելու մասին/ և ՀՀ ԿԳ նախարարի 29.03.2011թ. N 249 Ա/Ք, 22.04.2011թ. N 392 Ա/Ք , 05.05.2011թ. N 520 –Ա/Ք հրամանների 2011թ. մայիսի 20-ից մինչև հունիսի 6-ը ԵՄԽՀ-ում կազմակերպվեցին ամփոփիչ ատեստավորման քննություններ բոլոր մասնագիտություններով նախատեսված գրաֆիկով:

ՀՀ ԿԳ նախարարության կողմից թույլատրված ոչ պետական բուհերի նախորդ տարիների շրջանավարտներից թույլատրված 141 ուսանողներից քննությունների մասնակցել են 72-ը, որոնցից 66-ը քննությունները հանձնել են դրական գնահատականներով, այդ թվում 2 (երկու) շրջանավարտներ քննությունները հանձնել են միայն <<գերազանց>> գնահատականներով, որոնցից մեկը քննական հանձնաժողովի որոշմամբ արժանացել է գերազանցության դիպլոմի:

Ըստ մասնագիտությունների պատկերը հետևյալն է.

Մասնագիտութ.	Թույլ մաս.	Մասնակցել են	Միջին դրական գնահատական	Միայն գերազանց գնահատական	Գերազանցության դիպլոմ	Դիպլոմ չեն ստացել կամ անբավարար
Հայոց լեզու և գրակ. /բանասիր. բակալավրի որակավորում/	1	1	1	-	-	-
Հայոց լեզու և գրակ. /մանկավարժութ. բակալավրի ուսուցիչ/	86	39	37	-	-	48
Օտար լեզու և գրակ. անգլերեն լ. բանասիր.բակալավր/	15	5	4	-	-	11
Օտար լեզու և գրակ. անգլերեն լ. /մանկավարժութ. բակալավրի ուսուցիչ/	29	21	20	2	1	9
Ինֆորմատիկա և կիրառական մաթ.	5	2	1	-	-	4
Միջ.տնտ. հարաբեր.	5	4	3	-	-	2
Ընդամենը	141	72	66	2	1	75

Դասախոսական կազմ

1. Դասախոսների ընդհանուր թիվը – 53
 - որից հիմնական – 30
2. Գիտ. դոկտոր կամ պրոֆեսոր - 2
 - որից հիմնական – 0
3. Գիտ. թեկնածու, դոցենտ - 27
 - որից հիմնական – 13
4. Դասախոս կամ ասիստենտ – 24
 - որից հիմնական – 17

Գիտահետազոտական գործունեություն

ԵՄԽՀ հաշվետու ուսումնական տարում որոշակի աշխատանքներ են կատարվել գիտահետազոտական աշխատանքների բնագավառում: Բոլոնիայի գործընթացի շրջանակներում առաջնային են դառնում պրոֆեսորադասախոսական կազմի կողմից գիտահետազոտական աշխատանքների կատարումը և դրա խրախուսումը բուհի կողմից:

Համալսարանի դասախոսների ուժերով հրատարակվել են.

1. Աշոտ Բաբայան – Դ. Դեմիրճյանի պատմվածքների լեզվի շարահյուսական որոշ յուրահատկությունների մասին, Մ.Խորենացի հանդես 2011թ. N1-2
2. Մարիաննա Բադադյան – From Top To Botton/ուս. ձեռնարկ/ ՀՊՃՀ-2011թ.
3. Գալստյան Բակուր – Էկզիստենցիալիզմը որպես գրական ուղղություն- Մ.Խորենացի հանդես 2011թ.
4. Քթրյան Գագիկ – 1. On the number on lines with n nodes of GC sets, Eastfon, Approx 2011
2. On the number of maximal planes of GC^2 sets in R^3 , Approx 2011
5. Գալստյան Օլյա – 1. Ձեռնարկատիրական միջավայրի ձևավորման ներդրումային գործընթացի խրախուսման հիմնախնդիրները ՀՀ-ում, ՀՃԱ, -2011թ.
2. ՏԳՎ, կուրսային աշխատանքների կատարման մեթոդական ցուցումներ, ՀՊՃՀ, Երևան-2011թ
6. Առաքելյան Վալերի և ուրիշներ 1. Բիզնես պլանը որպես բիզնես միավորի
ռազմավարության զարգացման ձև, Գիտական հոդված

ների ժողովածու, Երևան-2011թ

2. Նորամուծական գործընթացի ֆինանսական աղբյուրների ձևավորման մի քանի հարցեր

Գիտական հոդվածների ժողովածու, Երևան-2011թ

3. Կազմակերպության մրցակցային ռազմավարության մշակման արդի հիմնախնդիրներ, Երևան-2011թ

4. Վենչուրային ֆիրմաների դերը նորամուծությունների կառավարման գործընթացում Գիտական հոդվածների ժողովածու, Երևան-2011թ

7. Կարագուլյան Հասմիկ – Դարասկզբի ֆրանսահայ արձակի բնորոշ գծերը, Մ.Խորենացի հանդես 2011թ.

8. Հարությունյան Արմեն – 1. <<Հանդես Ամսորեայ պարբերականը գեղարվեստական դաստիարակության մասին>> /1887-1900թթ/Եր.-2011թ.

2. Համեմատական մանկավարժություն- ուս.ձեռնարկ Երևան-2011թ

3. Գեղարվեստական մանկավարժության խնդիրների լուսարանումը <<Բազմավեպի>> էջերում/1843թ./Եր.-2011թ

4. Աբգար Հովհաննիսյանի <<Արձագանք>>հանդեսը գեղարվեստական դաստիարակության մասին / 1882-1898/ ԼՂՀ-2011թ.

9. Հակոբյան Մամիկոն – Ինֆորմացիայի փոփոխման հասցեական կողավորման համակարգ. Երևան -2011թ.

10. Թորոսյան Դավիթ - Задачи для составной плоскости с трещинами при смешанных краевых условиях, Степанакерт – 2011г.

Ստուգումներ

2010թ. դեկտեմբեր ամսվա վերջին ՀՀ ԿԳ նախարարության ՀԼԾ գործակալության կողմից բուհում իրականացվեց լիցենզավորման պայմանների ստուգում, որի արդյունքները շատ դրական էին և գոհացուցիչ:

Հանրային կապեր և տեղեկատվական համակարգեր

ԵՄԽՀ հասարակայնության հետ կապերի ոլորտը հանդիսանում է ԵՄԽՀ զարգացման ռազմավարական ուղղության կարևոր մաս և արտացոլված է ԵՄԽՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2011-15) համապատասխան դրույթներում:

Աշխատանքները զրվում են հիմնականում հետևյալ ուղղություններով.

- համագործակցություն տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների հետ, միջոցառումների լուսաբանում;
- <<Մովսես Խորենացի>> գիտական հանդեսի հրատարակում;
- մեթոդական աշխատանքների իրականացում;
- համացանցային ռեսուրսների զարգացում և համացանցային տիրույթում ԵՄԽՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տարածում;
- ֆոտո- և տեսանյութերի ստեղծում և արխիվացում;
- պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների և տարբեր կառույցների հետ աշխատանքներ:

Հետևողական աշխատանք է կատարվել ԵՄԽՀ-ում հանրային նշանակության միջոցառումների պատշաճ լուսաբանման ուղղությամբ: ԶԼՄ-ի, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների կողմից ԵՄԽՀ-ին հասցեագրված տեղեկատվություն ստանալու հարցումներին օրենքով սահմանված ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:

Համալսարանում արդյունավետ գործում են երկու ինտերնետային կայքեր.

1. xorhamalsaran.info.am
2. mkhu.am

Կայքի “Նորություններ” բաժնում հայերեն և անգլերեն լեզուներով տեղ են գտել ճանաչողական և տեղեկատվական բնույթի բազմաթիվ նյութեր: Ապահովվել է առցանց հետադարձ կապ, ինչպես նաև մշակվել և վերլուծվել են էլեկտրոնային փոստով ստացված նամակները:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն ու զարգացումն ԵՄԽՀ-ում ունեն խիստ կարևոր ռազմավարական նշանակություն և գտնվել են անմիջական ուշադրության ներքո:

Աշխատանքը ուսանողների և շրջանավարտների հետ

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՄԽՀ ուս. խորհուրդը շարունակել է իր գործունեությունը՝ պաշտպանելով ուսանողների շահերն ու իրավունքները, ապահովելով ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, մասնակցելով ուսումնական գործընթացի և այլ աշխատանքների կազմակերպմանը և աջակցելով ուսանողության համար բարենպաստ կրթական միջավայրի ձևավորմանը:

ՈւՄ աշխատանքներում էական կարևորություն ունի ուսանողների գործող կրթական համակարգի, նրանց իրավունքների և պարտականությունների և ներհամալսարանական կյանքի մասին իրազեկելու խնդիրը: Աշխատանքներ են իրականացվել ուսանողությանը կրեդիտային համակարգին ծանոթացնելու և այն ավելի ընկալելի դարձնելու ուղղությամբ: Կազմակերպվել են քննարկումներ, կլոր սեղաններ, սեմինարներ՝ ԵՄԽՀ ուսանողներին, հատկապես առաջին կուրսեցիներին իրենց իրավունքներին ու պարտականություններին ծանոթացնելու համար:

Նշենք նաև, որ նախորդ տարիների ընթացքում էլ ԵՄԽՀ-ի ուսանողները մասնակցել են ամենատարբեր միջոցառումների և գրանցել են բազմաթիվ հաջողություններ:

Կնքվել են պայմանագրեր.

Ուսանողների ուսումնարատադրական պրակտիկական կազմակերպելու համար կնքվել են պայմանագրեր.

1. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության հետ
2. <<Արդշինինվեստ>> բանկ ՓԲԸ-ի հետ